

Բայց կ'ապրի ան դեռ՝ այդ կիզիչ սօրին
Մէջ, կեղեւազուրկ. (մօտը, քայլ մ'անդին,
Իր գրոյցին կանգնած սանաւն կ'երեւի:)

Ու գօս մարմնոյն ծայրը բարձրականգուն,
Ուր չի հասնիր բնաւ կըտրոցը մարդուն,
Կը շարժի դալար փունջ մը սերեւի:

Իսկ ես կը խորհիմ այն բազմադարեան
Եւ պատկառելի երկնաբերձ ծառին,
Չոր մարդիկ կըտրոց կը կոչեն, որ հին
Է որչափ այս կեանքը երկրի վրան.

Որուն վրայ ամէն ցեղ՝ սերունդ՝ աղանդ
Երկաթի նանկով իր կիրքն է գրծեր,
Եւ կեղեւաքափ մարմինն անոր ծեր
Ծածկեր իր ծէսին փողովն հրնաւանդ:

Որ սակայն այդքան կըստանգնեաւ իսկ
Սնմեռ՝ մարդկային ազգաց բովանդակ
Կ'ընծայէ մտադիւր՝ միշտ քաղցր հովանի:

Չի երկնահաղորդ ծայրն իր բարձրութեանց,
Սնմաստոյց՝ մարդոց ձեռին մոլեխանձ,
Սոսուծոյ շունչն է որ կը ծածանի:

ԱՐՏՈՅՏ

Ա Ն Դ Ո Շ Ա Ն Ք

Մացառութիւն մէջ ուր ցայգին շունչը սարսուռն
Սնհունօրէն ինչ գաղտնիքով մը կը հծծէ
Հոն աստղերէն իրեն հրապոյ շրջաններուն
Սնիրական զրոյցներու վիշտը բոցէ,

Համբարուէ մը կը սպասեմ ոսկի մասնին
Չոր ասեմօք աւազին մէջ կորսնցուցի,
Ծառերն ինչո՞ւ փառերուն դէմ կը խոնարհին,
Այս ի՞նչ ձեռքեր են որոնք բոյն կուտան ինծի . . .

Փախչի՛լ: Հեզնա՛նք, երբոր նրագի մը ո՛րք լոյսին,
Ու գլուխներու որ իմ կուրծքիս վրայ կը մըսին,
Արդէն երկա՛ր ժամանակով գերին եղայ . . .

Չուրի՞ն, հովի՞ն թէ փառերուն պաղտախմ ես
Որ գերդ իրաւ մը նեխեաթի բըռնէն ձեռքէս,
Օձ մը եթէ սիրքս խայթէ լուսնահըմայ . . .

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՍԹ